

**Ընտրության ժամանակ հանձնաժողովի անդամի գործառույթը էականորեն
տարբերվում է դիտորդի գործառույթներից. ԿԸՀ նախագահ
13 նոյեմբերի 2015**

Թե տեղամասային հանձնաժողովի անդամը, թե լրագրողն ու դիտորդը ցանկացած ընտրական գործընթացի ժամանակ ունեն կարևորագույն գործառույթներ, սակայն հարկ է նկատել, որ նրանց կարգավիճակն էականորեն տարբերվում է: Այդ մասին Panorama.am-ի թղթակցի հետ զրույցում տեղեկացրեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Տիգրան Մուկուչյանը՝ պատասխանելով հարցին, թե արդյոք հանրաքվեի ժամանակ տեղամասային հանձնաժողովի անդամն ունի նույն կարգավիճակը ինչ լրագրողն ու դիտորդը:

Տիգրան Մուկուչյանի խոսքով, կարգավիճակների տարբերությունը բնական է, քանի որ հանձնաժողովի անդամների պարտականությունը գործընթացը կազմակերպելն է, այսինքն այդ գործընթացի ժամանակ կոնրկրետ գործառույթներ կատարելը՝ ընտրողների գրանցում, քվեաթերթիկի տրամադրում, ծրարի կնքում և այլն:

«Հանձնաժողովների անդամները գործընթացի կազմակերպման համար կրում են պատասխանատվություն, իսկ դիտորդը և լրագրողը ունեն շատ լայն, բայց բնույթով վերահսկողական հնարավորություններ», - հավելեց պարոն Մուկուչյանը:

Այսպես, օրինակ, հանձնաժողովի անդամը կարող է ներկայացնել դիմում տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկ կատարելու, տեղամասի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներ ներկայացնելու, եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին, ինչպես նաև քվեարկության կարգի խախտման դեպքում իրավունք ունի պահանջելու, որպեսզի գրանցամատյանում արձանագրվի իր գնահատականը:

Բացի այդ, հանձնաժողովի անդամները քվեարկության արդյունքներն ամփոփելիս կարող են քվեաթերթիկի կամ քվեարկության ծրարի վավերականության վերաբերյալ առարկություն ներկայացնել և այդ հարցով իրականացվող քվեարկությանը մասնակցել:

Իսկ քվեարկության նախորդ օրը միայն, ԿԸՀ նախագահի ներկայացմամբ, հանձնաժողովի անդամն իրավունք ունի ստորագրել քվեաթերթիկները և ընտրողների ցուցակների էջերը:

Իսկ ահա, լրագրողն ու դիտորդը նման իրավունքներ չունեն: Ըստ մեր զրուցակցի, նրանք իրավունք ունեն ներկա լինել հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում: Սահմանած կարգով հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին, ինչպես նաև անարգել ծանոթանալ քվեաթերթիկների նմուշներին, ընտրական փաստաթղթերին, ընտրական հանձնաժողովների որոշումներին, նիստերի արձանագրություններին, դատարանի համապատասխան վճիռներին, լիազոր մարմնի՝ ընտրողին տրամադրած համապատասխան տեղեկանքին, ստանալ դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ (բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների), քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարել քաղվածքներ ընտրողների ստորագրած ցուցակներից:

Բացի այդ լրագրողն ու դիտորդը իրավունք ունեն ազատ տեղաշարժվել քվեարկության սենյակում՝ քվեաթերթիկների ու քվեատուփի դիտարկման համար և այլն, բայց իրավունք չունեն միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին:

Նաև նշենք, որ հանձնաժողովի անդամը պետբյուջեից վարձատրվում է, իսկ դիտորդ-լրագրող-վստահված անձը՝ ոչ:

«Լրագրողը և դիտորդը ունենալով շատ լայն վերահսկողական իրավասություններ, այդուհանդերձ նրանք իրավունքների ծավալը չի համադրվում կամ նույնացվում հանձնաժողովի անդամի համար սահմանված իրավունքներին», -հավելեց ԿԸՀ նախագահը:

Աղբյուր՝ Panorama.am